ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ԲԱՑՈՒՄ 1878 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ Ե.

24 ՅՈՒԼԻՍ 1878

ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ
— 1878 —

# ԴԻՒԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

| | |
|---|---|
| Ստեփան փաշա Ասլանեան | Ա. Ատենապետ |
| Տիգրան էֆէնտի Եուսուֆեան | Բ. » |
| Յովհաննէս էֆէնտի Նուրեան | Գ. » |
| Համբարձում էֆէնտի Ա. Պէլաճեան | Ա. Ատենադպիր |
| Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան | Բ. » |
| Ադամ էֆէնտի Տէրոյենց | Գ. » |

## ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|---|---|
| Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան | Ատենապետ |
| Ներսէս վարդապետ Ալլանեան | |
| Աննիքերիմ էֆէնտի Մանուկեան | |

## ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|---|---|
| Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ | Ատենապետ |
| Գէորգ էֆէնտի Ապառուչեան | |
| Գէորգ էֆէնտի Աթխարաճեան | |

## ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻՒԱՆ

| | |
|---|---|
| Յովհաննէս էֆէնտի Լուսեան | Ատենապետ |
| Մինաս էֆէնտի Գարամանճեան | |
| Պօղոս էֆէնտի Ժամկոչեան | |

## ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|---|---|
| Կարապետ էֆէնտի Շահպազեան | Ատենապետ |
| Յարութիւն էֆէնտի Մէրմէր—Օղլի | |
| Ստեփան էֆէնտի Փափազեան | |

## ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|---|---|
| Ռափայէլ էֆէնտի Ալթուն—Տուրի | Ատենապետ |
| Մատթէոս էֆէնտի Ալիքսանեան | |
| Յակոբ էֆէնտի Արշակ | |

## ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|---|---|
| Կարապետ Եպիսկոպոս Սերովբեան | Ատենապետ |
| Թադէոս էֆէնտի Պէկեան | |
| Սահակ Աբրօ էֆէնտի | |

## ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|---|---|
| Յովհաննէս էֆէնտի Պօյաճեան | Ատենապետ |
| Մկրտիչ էֆէնտի Լաւեան | |
| Տօքթ. Փէշտիմալճեան էֆէնտի | |

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|---|---|
| Յարութիւն էֆէնտի Նորատունկեան | Ատենապետ |
| Ադամ էֆէնտի Տէրոյենց | |
| Գաբրիէլ էֆէնտի Գրանճէրեան | |

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## ԲԱՑՈՒՄ 1878 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ Ե.

21 ՅՈՒԼԻՍ 1878

ՆԱԽԱԳԱՀ. — Ամենապատիւ Տէր Ներսէս Ս. Պատրիարք Հայոց.
ԱՏԵՆԱՊԵՏ. — Ստեփան փաշա Ասլանեան.

### ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

#### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

##### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1 Խորէն Արքեպ. Նար Պէյ Բ Պ
2 Կարապետ Եպս. Սերովբեան Բ 2
3 Մատթէոս » Իզմիրլեան Բ Պ
4 Ամբրոսիոս Վ. Ադրին.
5 Գաբրիէլ » Թաթարեան Բ 2
6 Եղիշէ » Ալաճան
7 Խորէն » Կիրայեանց Բ Պ
8 Հմայեակ » Գիմաքսեան
9 Յովհաննէս » Փափազեան
10 Ներսէս » Ալլանեան
11 Պօղոս » Խօլասեան Բ Պ
12 Աբրահամ Ք. Սաֆրըլեն Բ
13 Գէորգ » Արծրունի Բ 3
14 Գրիգոր » Աճէմեան Բ
15 Խորէն » Փէհլիվանեան
16 Յարութիւն » Սերոբեան
17 Յովհաննէս » Ակնեան
18 Սուքիաս » Ստեփանեան Բ Պ
19 Սահակ » Տ. Սարգսեան
20

#### ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

##### (Ա. ՎԻՃԱԿ)

[illegible]

21 Գրիգոր Պէրպէրեան Բ 2
22 Գէորգ Աթխարաճեան Բ 2
23 Խաչիկ Աստուածատուրեան Բ Պ
24 Կարապետ Ալպոյաճեան Բ
25 Համբարձ. Մարգարեան
26 Մինաս Գարամանճեան
27 Յովհաննէս Պօյաճեան
28 Մէհտերեան Տօքթօր
29 Պօղոս Ճանճեան
30 Սարգիս Ագարէկեան
31 Սահակ Աբրօ Բ 4
32 Աննիքերիմ Մանուկեան Բ Պ
33 Փէշտիմալճեան Տօքթօր Բ 4
34 Բարթող Քիւրքճիպաշեան
35 Յովակիմ Ֆէնէրճեան Բ Պ
36 Ադամ Տէրոյենց Բ
37 Գէորգ Ապառուչեան

##### (Բ. ՎԻՃԱԿ)

Պէշիկթաշ

38 Անդրանիկ Կրճիկեան
39 Ալիքսան Խօրասանճեան Բ 2
40 Բարսեղ Հոլաճեան Բ

[illegible]

41 Զարեհ Քէօմիւրճեան Բ 4
42 Մկրտիչ Քիւրքճիպաշեան
43 Պօղոս Ժամկոչեան Բ
44 Սերովբէ Մաղասեան Բ 4

Խասգիւղ Ս. Խաչ

45 Թադէոս Պէկեան
46 Աբիսող Ֆէլէկեան
47 Գաբրիէլ Գրանճէրեան Բ 4
48 Ստեփան Ասլանեան

Խասգիւղ Ս. Կարապետ

49 Միհրանդ Պաղտասարեան Բ Պ
50 Պօղոս Թորգոմեան
51 Նիկողոս Ալաճաճեան
52 Տիգրան Փափազեան Բ

##### (Գ. ՎԻՃԱԿ)

Բէրա և Գումգափու

53 Որբիկ Ռընձեան
54 Գրիգոր Մելիքլէնեան
55 Մարտիրոս Յ. Տիլէեան
56 Միքայէլ Մանթիքանեան
57 Նշան Քայաջեան Բ Պ
58 Ստեփան Խնդիրեան Բ
59 Տելեմաք Երեկճեան Բ 2
60 Խաչօ Չայեան Բ 2

---

Բ. Բացակայութիւն առաջին.
Բ 2 Բացակայութիւն երկրորդ.
Բ Պ Բացակայ բանաւոր պատճառաւ.

61 Յարութիւն Նորատունկ. Բ Պ
62 Գրիգոր Մարկոսեան Բ 3

Միջագիւղ

63
64
65 Յակոբ . Նորատունկեան
66 Տիգրան Եուսուֆեան Բ
67

Պէյքօզ և Գուրուչէշմէ

68 Յ. Մէլիքեան—Գալֆա

(Դ. ՎԻՃԱԿ)

Գատըգիւղ և Իճատիէ

69 Յովհաննէս Լուսեան Բ
70 Սահակեան Պէյլիկճեան

Գափալը

71 Կարապետ Շահնազարեան Բ
72 Մկրտիչ Մուրատեան Բ

Նարլըգափու

73 Յակոբ Եսմէրճեան

Եէնիմահալլէ Սամաթիոյ

74

Թօփգափու

75 Յովհաննէս Մարգարեան

Էյուպ և Եդիրնէ և Ս. Աստուածածին

76 Գաբրիէլ Յ. Մելիքեան

Գումգափու

77 Աստուր Խիլիպտաշեան Բ 2

Հիսար և Պէօյիւք Չէքմէչ

78 Յովհաննէս Նուրեան Բ Պ

Նոր գիւղ և Արնաւ

79 Ղազար Հովսեան Բ 2

Պոլիս

80 Մկրտիչ Գ. Էսայեան Բ 2
81 Յովհաննէս Կրճիկեան
82 Թադէոս Թէրզեանեան Բ 3

Քուրուչէշմէ

83 Յարութիւն Չիքինճիրճեան Բ 2
84

(Ե. ՎԻՃԱԿ)

Սամաթիա

85 Ալեքսան Պէշիրեան
86 Աւետիս Քօլօլեան Բ
87 Եղիազար Մելիքեան Բ 4
88 Մինաս Ճափճափեան
89 Յակոբ Քասպարեան Բ
90 Յակոբ Ամասեան
91 Նազարէթ Շահնազարեան Բ 2
92 Յարութիւն Թիւլեան
93 Յակոբ Արշակ
94

Խասգիւղ

95 Առաքել Այթուն Տէրրի
96 Խաչատուր Միսաքեան Բ
97 Ոսկան Պէյլիկճեան Բ 2
98 Սիմոն Միքայէլեան
99 Սարգիս Արբահամեան Բ 2
100

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

Կարին

101

Քէօթահիա

102 Մ. Փափազեան Տօրթօր

Անգիւրիա

103 Ռուբէն Կիւմիւշկէրտ. Բ Պ

Նիկոմիդիա

104 Կարապետ Ս. Իւթիւճեան

Վան

105 Պետրոս Միսաքեան

Դիարպէքիր

106

Սեբաստիա

107 Կարապետ Խօչիկեան

Բաղէշ

108

Պրուսա

109 Քրիստոսատուր Ղազարոս.

Եւդոկիա

110

Ադանա

111 Համբարձում Ալաճաճեան

Բալու

112 Յովհաննէս Այվազեան

Եդեսիա

113 Յակոբ Իւթիւճեան

Մալաթիա

114

Հաճըն

115

Երզնկա և Քամախ

116

Թէքիրտաղ

117 Տիգրան Սիմոնեան Բ

Կեսարիա

118 Գէորգ Գրիքճեան

Խարբերդ

119

Պալուեր

120

Մուշ

121 Սահակեան Փափազեան Բ. Պ

Տիգրանակերտ

122 Նշան Գարագաշեան

Զէյթուն և Մարաշ

123

Տրապիզոն

124 Տիգրան Ց. Նորաշխեան Բ 2

Պոլսոյ

125 Մելքոն Իւկէնտէրեան

Տիարպեքիր

126 Միհրան Զօպանեան

Վան

127

Ակնայ

128

Հալէպ և Անթապ

129

Սեբաստիա

120 Մկրտիչ Յ. Մելիքեան

Ռոտոսթօ

131

Կոնիա

132 Արրահամ Յ. Այվազեան Բ Յ

Չմշկածագ

133 Համբարձ. Մորթիճիեան.

Գաղատիա

134

Ադանա

135

Մալաթիա

136 Մատթէոս Ալիքսանեան

Եոզղատ

137 Լօռօֆէլ Պալեօզեան Բ 2

Մարզուան

138 Գէորգ Վարդանեան

Իզմիր

139 Պօղոս Պապօեան

Նիկոմիդիա

140

# ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ընտրութիւն կրօնական և քաղաքական ժողովոց։

Բ. Պատասխանի Ս. Պատրիարք Հօր, երկոտասան երեսփոխանաց հարցման։

---

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատեանը բացուեցաւ ժամը 7ին ի ներկայութեան 41 երեսփոխանաց, որոց վերջէն թիւը յանգեցաւ 60ի։

## Ա.

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՆԱԽԸՆԹԱՑ Բ. Գ. Դ. ՆԻՍՏԵՐՈՒՆ

Երեսփոխանք ի դիտողութիւն հրաւիրուեցան նախապէս Բ. նստի ատենագրութեան վրայ, և դիտողութիւն ընել չըլլալով՝ քուէի դրուեցաւ սոյն նստի ատենագրութիւնն և ընդունեցաւ ժողովէն։

Նոյնպէս Գ. նստի ատենագրութեան վրայ ալ դիտողութիւն ընել չըլլալով, քուէի դրուեցաւ և ընդունեցաւ միաձայնութեամբ։

Կարգն եկաւ Դ. նստի ատենագրութեան, որոյ վրայ հետեւեալ դիտողութիւնք տեղի ունեցան։

ԹԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. Էֆ. — 40 երես. Ա. կէտ։ Խօսքս առանց երկրակացութեան ճշտուած է. ըսած էի թէ «քանի որ ատենի որոշում մը կայ և խառնուածեան դիւանն ալ դուցէ անոր վրայ հիմնած է իր առաջարկութիւնը, աստի կառաջարկեմ որ նոյն դիւանի տեղեկագրոյն երկրակացութիւնն ընդունուի»։

ՊԷԿԵԱՆ Թ. Էֆ. — 35 երես. Բ. սիւնակ. Խորհրդականի նկատմամբ խօսած ատենս՝ «Փօլիս 'ի չնորհածը չիրնար ինք փակեցնել» ըսած չեմ. այլ ըսած եմ թէ «կրնայ փակերցնել, բայց պայն ալ պատասխանատու կճանչնայ»։

Նոյնպէս 36 երես. Ա. սիւնակ. նոյն խօսքիս շարունակութեան մէջ՝ «երբ Պատրիարք մ'ունինք և խորհրդական մ'ալ փակերցնենք» խօսքիս հետեւորդը պէտք ըլլայ։

« երկու պատասխանատու անձ կըլլան, և պատասխանատուութիւնը չսահմանուելով, չփոթութիւններ կծագին »։

Ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով, Գ. Նատի ատենագրութիւնն ալ Քափամաճեան և Պէկեան էֆէնտիներու դիտողութեամբքն հանդերձ քուէի դրուելով ընդունուեցաւ ժողովէն։

2.

## ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ազգային երեսփոխաններէն՝

Տ. Ռուբիոս քահանայ
Յարութիւն էֆէնտի Նորատունկեան
Նշան » Քազազեան
Միհրան » Պահճէգարուլեան

անձնական տկարութեան պատճառաւ այսօրուան նստէն բացակայ ըլլալնուն համար, օրինաւոր բացակայ նշանակուեցան ներկայութեան տումարին մէջ։

3.

## ՏԵՂԵԿԱԳԻՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԻ

Կարդացուեցաւ յետագայ տեղեկագիրը, որ Դաստիարակութեան դիւանէն եկած էր։

Վսեմափայլ Ատենապետ փոխա Ազգային Ժողովոյ.

Ազգ. ժողովոյ Յուլիս 7ի նստին մէջ երեսփոխանաց ոմանց կողմանէ մատուցեալ և դաստիարակութեան դիւանիս յղեալ առաջարկն, որ կրկնութիւն էր նոյն խակ Ուսում. Նախկան Խորհրդոյ մէկ առաջարկութեան, և որ Ազգ. դաստիարակութեան ծախուց համար յատուկ տուրքի մը հաստատութիւնը կը խնդրէր, Դիւանս 'ի նկատի առաւ, և ահաւասիկ իւր կարծիքն այս մասին։

Ազգ. վարչութեան Ուսում. խորհուրդն առ Քաղ. ժողովն մատուցեալ իւր համարատուութեան երկամեայ տեղեկագրին մէջ ինչ ինչ առաջարկութիւններ ըրած էր, զորս Ազգ. ժողովն անշուշտ նկատողութեան պիտի առնու. սակայն մինչև որ նոյն համարատուութեան տեղեկագիրն Ազգ. ժողովոյ կողմէ նկատողութեան առնուի իր կարգին՝ թերևս բաւական ժամանակ անցնի. ըստ այսմ առաջարկեալ խնդիրներէն նիւթականին ստիպողականութեանը համար անյապաղ տնօրէնութիւն խնդրուած և առաջարկուած էր որ դաստիարակութեան ծախուց համար տուրք մը սահմանուի մէն մի անհատի տարեկան 5 դահեկան քանակութեամբ, որպէս զի այս տուրքէն գոյացեալ արդիւնքովն Ուսում. խորհուրդն կարենայ ազգային դաստիարակութեան օգտին համար պէտք եղած միջոցները տնօրինել, կեդրոնական վարժարանին հաստատութեան ձեռնտու գտնուիլ, անկարող դպրոցներու նպաստել, վարժարանաց այցելու տեսուչներ սահմանել, Ակադեմիա մը հիմնել, կրթական թերթեր հրատարակել, կարօտ և արժանաւոր դասատուաց օգնել, իւր գաւառական յարաբերութիւններն ընդարձակել, ուսումնական մրցումները քաջալերել եւն. եւն։

Դաստիարակութեան դիւանս առանց վարանման կընդունի և կը հաստատէ որ Ազգ. դաստիարակութեան և կրթութեան ընդհանուր տեսչութիւնը վարող մարմինը շատ պիտոյքներ ունի, որ ազգին բարոյական զարգացմանն և ապագային համար անհրաժեշտ են և կենսական, և ծախուց կը կարօտի այս պիտոյքներն հոգալու և իւր պաշտօնը յարդիւնս ածելու համար։ Թէ և երբեմն վարչութեան հաշուեկշիռներուն մէջ գումարներ տեսնուած են յանուն դաստիարակութեան ծախուց, սակայն կեդր. սնտուկն անկարող գտնուած է զայնս մատակարարել, և Ուսում. խորհուրդները զրկուելով նիւթական միջոցներէ՝ չեն կրցած պատասխանել արժանապէս իրենց պաշտօնին կոչմանը։ Այսպիսի պարագայի մէջ լաւագոյն է յատուկ հասոյթի աղբիւր մը սահմանել Ազգ. դաստիարակութեան ծախուց համար, և այս կերպով ապահովել Ուսում. խորհրդոյ գործելու ազատութիւնը։

Այս տեսութեամբ դաստիարակութեան դիւանս կեզրակացնէ թէ՝

1. Ազգ. դաստիարակութեան վերաբերեալ ծախքերը հոգալու համար՝ Ուսում. խորհրդոյ առաջարկն Ազգ. ժողովդ կրնայ ընդունիլ և խնդրուած տուրքը սահմանել, զոր Հայոց ազգը ինքնաբեր յօժարութեամբ կը հատուցանէ, անոր նպատակին կարևորութիւնը և փրկարար արդիւնքը կշռելով։

2. Սոյն տրոց հաւաքման և մատակարարութեան համար առաջարկեալ զատ պաշտօնէութիւնն կրնայ ընտրուիլ այժմէն Ազգ. ժողովէս կամ Վարչութեան Քաղ. ժողովէն՝ յանձնարարութեամբ այս պատկառելի ժողովին, և այս պաշտօնէութիւնն Ուսում. խորհրդոյ հետ խորհրդակցութեամբ՝ սահմանեալ տրոց գործադրութեան վերաբերեալ մանրամասնութիւնները ծրագրելով, 'ի վերջէ յատուկ կանոնագրով մը պէտք է բերէ Ազգ. ժողովիս 'ի վաւերացումն։

Մնամք պատկառելի ժողովոյդ
խոնարհ ծառայք
Անդամք դաստիարակութեան դիւանին
Ղալաթիա Գէորգ Ա[illegible]
21 Յուլիս 1878

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Խնդիրն այս տեղեկագրով պարզուած է և խնդրոյ կարգը պիտի անցնի, որպէս զի օրակարգն մտած ատեն վիճաբանութեան ենթարկուի։

Դիտողութիւն ընող չըլլալով, որոշուեցաւ սոյն տեղեկագիրը խնդրոյ կարգն անցընել։



4.

## ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ատենապետ փաշան՝ Սամաթիոյ նոր թաղի պակսած մէկ երեսփոխանի ընտրութեան վերաբերող յետագայ գրութիւնները ներկայացուց, որք կարդացուեցան։

## ՏԵՂԵԿԱԳԻՐ ԸՆՏՐՈՂ ԺՈՂՈՎՈՅ

Ամենապատիւ սրբազան Պատրիարք Հայր.

Սամաթիոյ Նոր—թաղի երեսփոխան հանգուցեալ Օրմէն էֆ. Խօճասարեանի տեղ ըստ հրամանի բարձր Սրբազնութեան Ձերում՝ նոր ընտրութիւն կատարեցաք ընտրական գործողութեանց հրահանգին համեմատ, որոյ տեղեկագիրն փութամք դնել առ ոտս Ամենապատիւ Սրբազնութեանդ։

Ի 25 Յունիսի թաղիս Քարոզչի կողմանէ ծանուցաւ Թաղ. խորհրդոյ հրաման բարձր Սրբազնութեանդ՝ և առաջարկեցաւ ընտրող ժողով կազմել։ Ուստի Թաղ. խորհրդոյ հինգ անդամոց վերայ դաղտնի քուէիւք երեք անձինք եւս ընտրուեցան

Վրթանէս աղա Գարագաշեան
Մարտիրոս » Քէրէստէճեան
Գալուստ » Թիւլպէնտճի

որք հրաւիրեցան 'ի պաշտօն Արժ. Քարոզչի առանձինն գրերով՝ և այսպէս Ընտրող. ժողովս ըստ օրինի իւր Դիւանն դաղտնի քուէիւք կազմելով՝ ձեռնարկեց ընտրական գործողութեանց։

Ընտրող. ժողովս նախապէս ընտրողաց ցանկն պատրաստեց՝ որ քառասուն և երկու անձերէ կը բաղկանայ. և դաղտ քուէիւ մի անձի համար եռապատիկ թուով ընտրելեաց ցանկն եւս պատրաստեց՝ որք են.

Մեծ. Մկրտիչ էֆ. Մէզպուրեան
» Մ. Յակոբ » Դերձակեան
» Աւետիս » Սուրէնեան

Ընտրողաց և ընտրելեաց ցանկերն մասնաւոր ծանուցագրով անմիջապէս կախուեցան Ս. Եկեղեցւոյս բակն , առ Ընտրողս ծանուցագիրն հրատարակեցաւ 'ի լրագրի և մասնաւոր ծանուցմամբ և , առ յեկեղեցւոյ՝ ըստ տրամադրութեանց հրահանգի ընտրական գործողութեանց ։ Քուէարկութեան համար օր որոշուեցաւ Յուլիս 2 կիւրակէ օրն ։

Նոյն օրն 'ի ժամ 12 Ընտրական ժողովարդէն գումարեալ 'ի Թաղ. խորհրդարանի՝ ձեռնարկեց քուէարկութեան ամենայն օրինաւորութեամբ . և ժամն ճիշդ 5ին ըստ յայտարարութեան՝ քուէհանի գործողութեան սկսաւ ըստ մանրամասն հրահանգի ընտրական գործողութեանց։ Քուէատուներու ընտրողներէն՝ քսանեւհինգ անձինք միայն մասնակցեցան քուէարկութեան և բացարձակ առաւելութեամբ քսանեւչորս ձայնի քուէից ընդդէմ միոյ՝ ընտրեցաւ յերեսփոխանութիւն մեծ. Պօղոս Էֆ. Միրիջեան , Ատենապետ Թաղ. խորհրդոյ՝ վկայեալ փաստաբան , հմուտ գրականութեան լեզուին իրոյ և առաւել ուսմնականին ։

Ընտրութեան վրայ երբէք գիտողութիւն մը չկայ , նաև ընտրական գործողութեանց վերաբերեալ տեղեկագիր և այլ ամենայն թղթերն քուէատուփի մէջ կնքեալ առ՝ պահուած կան և մնան 'ի Թաղ. խորհրդարանի ։

Աստատակ . Արդարեան Հայր . Սամաթիոյ Նոր-Թաղի երեսփոխանի ընտրութեան տեղեկագիրն՝ զոր Ընտրող. ժողովս խոնարհաբար կը փութայ մատուցանել առ Ատեն. Արքայնութիւն Ձեր ,

Որոյ եմք միշտ և մնամք խոնարհ ծառայք

Դիւան Ընտրողական ժողովոյ

Ատենադպիր վասն Ատենապետի նախագահ

Ծերունի  Պ. Յ.  Պետրէ Վ.

Սարգիսեան  Թէքէճճեան  Խաչիկեան

5 Յուլիս 1878

Նոր-Թաղ Սամաթիոյ

## ՏԱՆՕԹԱԳԻՐ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Վաւերացուք Ատենապետ փոխ Ազգային ժողովոյ

Ազգային ժողովէն պակաս Սամաթիոյ Նոր—Թաղի երեսփոխանին տեղ նոր ընտրութիւն կատարուած և տեղեկագիրը Ընտրող. ժողովոյն կողմէ հասած ըլլալով , Դատաքննութեան քննեց ընտրելոյն սահմանադրական հանգամանքը և Սահմանադրութեան համեմատ գտաւ ։

Ըստ այսմ Սամաթիոյ Նոր—Թաղէն երեսփոխան ընտրուած է Պօղոս էֆէնտի Միրիջեան ։

Ուստի Ընտրող. ժողովոյ տեղեկագրին հետ ընտրելոյն յանձնառագիրն ալ ներկայ ծանուցագրով կմատուցանեմք Ազգ. ժողովոյդ ի պատշաճ անօրէնութիւն ։

Մնամ յարգանօք

'ի Դիւանէ Քաղ. ժողովոյ

Ատենադպիր  վասն Ատենապետի

Մ. Ալէքսանեան  Վ. Ս. Մ. Գէօլէճեան

21 Յուլիս 1878

## ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿ ԸՆՏՐԵԼՈՅՆ ԿԻՄԸ

Բարձրաշնորհ Արդարեան Հայր.

Սամաթիոյ Նոր—Թաղի կողմանէ երեսփոխան ընտրուած ըլլալով՝ ըստ այդ պարտութեան բարձր Արդարութեանդ ներկայիս կը յայտնեմ թէ յանձնառու եմ ընդունիլ Ազգ. ժողովոյ անդամակցութիւնը , զոր հաղորդելով բարձր Արդարութեանդ ,

Մնամ Ձերդ բարձր Արդարութեան

1878 Յուլիս 30  ամենախոնարհ ծառայ

Կ. Պոլիս  Պ Ս. Մկրտիչեան

Ատենապետ փաշան այն ընտրութեան վրայ ի գիտողութիւն հրաւիրեց երեսփոխանները , բայց գիտողութիւն ընող չըլլալով՝ ընտրութիւնը քուէի դրաւ , և միաձայնութեամբ ընդունուեցաւ ժողովէն . հետեւապէս երեսփոխան ընտրուեցաւ

Պօղոս էֆէնտի Միրիջեան



# ՕՐԱԿԱՐԳ

## Ա.

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Օրակարգնիս երկու խնդիր կպարունակէ , մին քան զմիւսն կարեւոր ։ Առաջինն է վարչութեան երկու ժողովոց ընտրութիւնը , որոյ իւրաքանչիւրին համար մէկ մէկ ընտրելեաց ցանկ պատրաստուած է արդէն . առաւօտեան Կրօն ժողովոյ ընտրելեաց ցանկին վրայ եկեղեցական համագումար ժողովոյ կողմէն եկած տեղեկագիրը .

(Կը կարդացուի հետեւեալը)

19 Յուլիս 1878

Այսօր Եկեղ. Համագումար ժողովն հրաւիրեալ յԱզգ. Կեդր. վարչութեան Կրօն՝ ժողովոյ , չանքատառ ընտրելեաց եռապատիկ ցանկը պատրաստելու համար՝ քուէարկութիւնն բրաւ 'ի ներկայութեան մեծագոյն մասին անդամոց ժողովոյս ։ Քուէարկուք էին 42 փոխանակ 70 հրաւիրելոց ։ Երեսուն և չորս եկեղեցականք անձամբ ներկայ գտնուեցան , և 8 եկեղեցականք նամակաւ ղրկած էին իրենց քուէներն ։

Քուէարկութենէ ետքը անմիջապէս քուէհամարն եղաւ , որոյ արդիւնքը հետեւեալ եռապատիկ ընտրելեաց ցանկը յառաջ բերաւ ։

1 Ամեն. Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս Խրիմեան  Քուէ 22
2 Արժ. Տ. Սուքիաս Աւագ—քահանայ Մայր—եկեղեցւոյ  » 36
3 Գեր. Տ. Մատթէոս Ս. Եպիսկոպոս Իզմիրլեանց  » 35
4 Արժ. Ա. Յովհաննէս Մ. վարդապետ փափազեան  » 35
5 » Տ. Սահակ քահանայ Տէր Սարգսեանց  » 35
6 Գեր. Տ. Կարապետ Ս. Եպիսկոպոս Սէրովբեան  » 34
7 Արժ. Տ. Յովհաննէս քահանայ Շահպազեան  » 31
8 » Տ. Կարապետ քահանայ Սէթեան  » 29
9 » Տ Գրիգոր » Կ. Արամեանց  » 29
10 » Տ. Գէորգ » Փափազեան  28
11 » Տ Խորէն » Փէհլիվանեան  29
12 » Տ. Համբարձում Մ. վարդապետ Գիմիշեան  » 26
13 » Տ. Արիստակէս » Մանուէլեան  » 26
14 Գեր. Տ. Գրիգոր Ս. Արքեպիսկոպոս Ա. Գալուստեան  » 26
15 Արժ. Տ. Վրթանէս քահանայ Գառնիկեան  » 23
16 Գեր. Տ. Խորէն Ս Արքեպիսկոպոս Նար—Պէյ  » 24
17 Արժ. Տ. Կարապետ քահանայ Յակոբեան  » 24
18 » Տ Յովհաննէս » Ս. Կարապետ եկեղեցւոյ  » 24
19 » Տ. Գրիգոր քահանայ Աճեմեան  » 23
20 » Տ. Ներսէս Մ. վարդապետ Արշակունեան  » 23
21 » Տ. Իգնատիոս վարդապետ Շիշմանեան  » 22
22 » Տ. Վրթանէս քահանայ Միջնագիւղի Գալեան  » 22
23 » Տ. Զաքարիա Մ. վարդապետ Զիւմրիւթճեան  » 21
24 » Տ. Գաբրիէլ քահանայ Խանձեան  » 21
25 » Տ. Աբրահամ » Գալաթիոյ  » 20
26 » Տ. Թադէոս « Աճեմեան  » 19

27 » Տ. Գէորգ վարդապետ Իւթիւճեան » 19
28 » Տ. Գարեգին վարդապետ
29 » Տ. Յարութիւն քահանայ Սերովբեան » 18
30 » Տ. Եղիշէ Ծ. վարդապետ Ապահունի » 18
31 » Տ. Եղիշէ քահանայ Սերէնեանց » 18
32 » Տ. Արիստակէս » Զիզմէճեան » 18
33 Արժ. Տ. Վահան վարդապետ Տէր Մինասեան » 18
34 » Տ. Մարուքէ քահանայ Գարակէօմիւկի » 17
35 » Տ. Բարթուղիմէոս վարդապետ Պաղճեան » 17
36 » Տ. Պօղոս Ծ. վարդապետ Խօլասեան » 17
37 » Տ. Պետրոս քահանայ Ղարիպեան » 15
38 » Տ. Գարեգին » Ս. Խաչ Իւսկիւտար » 15
39 » Տ. Գէորգ քահանայ Թօփգափուի » 13
40 Գեր. Տ. Սիմէօն եպիսկոպոս Սէֆէրեան » 13
41 » Տ. Յարութիւն » Յովհաննէսեան » 12
42 Արժ. Տ. Ամբրոսիոս Ծ. վարդապետ Բուբինեան » 12

Ժողովս որոշեց ըստ օրինի ղրկել զայս ցանկ առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ որպէս առ Նախագահ Ազգ. Երեսփ. ժողովոյ առնել զպարտուպատշաճն յետ պատրաստութեան ցուցակի եռապատիկ ընտրելեաց Ազգ. Կրօն. ժողովոյ։

Նախագահ
Գրիգոր Եպիսկոպոս Տէր Պօղոսեան
Ք. Խաչերեան

Ատենադպիր Եկեղ. Համագ. ժողովոյ

| Ատենադպիր առօրեայ | Ատենապետ առօրեայ |
|---|---|
| Եղիշէ Վարդապետ Ապահունի | Սահակ Քահանայ Տէր Սարգսեան |

19 Յուլիս 1878
Պատրիարքարան Հայոց
'ի Գում—գափու

## ՋՆՋԵԼԻ ՑԱՆԿ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ ԸՆՏՐԵԼԵԱՑ

1 Գէորգ Սաթիմարաճեան
2 Իլիաս Զայեան
3 Սենեքերիմ Մանուկեան
4 Գէորգ Քիլըճճեան
5 Թադէոս Համամճեան
6 Մատթէոս Ալեքսանեան
7 Գրիգոր Քարակէօզեան
8 Ստեփան Պէյլիկճեան
9 Բարսեղ Հալաճեան
10 Յակոբ Զօպանեան
11 Յարութիւն Նորատունկեան
12 Նիկողոս Աշնանեան
13 Մկրտիչ Ֆրէնկեան
14 Գէորգ Փանոսեան
15 Գաբրիէլ Նորատունկեան
16 Սահակ Ղազարոսեան
17 Ռուբէն Գրիգորեան
18 Մկրտիչ Մուրատեան
19 Երովբ Տէմիրճիպաշեան
20 Կարապետ Հազարեան
21 Տիգրան Կիւմիւշկէրտանեան
22 Տօքթէօր Ռաֆայէլեան
23 Զարեհ Քերովբէ
24 Մանուկ Ալլանեան
25 Նազարէթ Շահպազեան
26 Բարթող Քիւրքճիպաշեան
27 Աւագեալ Ալթուն Տիւրրի
28 Մարտիրոս Միւհէնտիսեան

Պ. Կ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

| Կարապետ Եպիսկոպոս Լեւոնքեան | Մ. Եպիսկոպոս Իւթիւճեան |
|---|---|

Ս. Ասլանեան Յ. Նորատունկեան Ա. Տ. Տէրոբէ

Ղալաթիա
18 Յուլիս 1878

Նոյնպէս՝ Քաղ. ժողովոյ ընտրելեաց համար Համագումար դիւանն ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր ցանկ մը պատրաստած է, զորս տպելով օրինակներն ամենքդ ալ ընդունած էք արդէն հրաւիրագրոց հետ։ Ուրեմն անմիջական գործերնիս է այսօր այս



երկու ցանկերու վրայ Կրօն. և Քաղ. ժողովոց ընտրութիւնը կատարել։

Զայս ըսելով Ատենապետ փաշան, նախ եկեղեցական համագումար ժողովոյ պատրաստած ընտրելեաց ցանկին ամբողջութիւնը քուէի դրաւ, զոր ժողովն ընդունեց միաձայնութեամբ ։

Յետոյ՝ այն ինչ Քաղ. ժողովոյ ընտրելեաց ցանկին ամբողջութիւնն ալ քուէի դնել կը պատրաստուէր, խօսք ուզողներ եղան ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Համագումար դիւանի շինած ցանկին մէջ հրաժարեալ Քաղ. ժողովոյ անդամներէն ոմանց անունները թէ և գրուած են, բայց մէկ քանիին անունները չկան . այս վերջիններէն կարգէն է Քօլօլեան Էֆէնտին . կհարցնեմ՝ ինչո՞ւ չէ գրուած անոր անունը . գիտեմ անոր աշխատութիւնները մօտէն տեսայ ։

ՊԷԿՆԵԱՆ Թ. ԷՖ.— Ես ալ կը տեսնեմ որ հրաժարեալ Քաղ. ժողովոյ անդամներէն Ֆնտըգլեան Յարութիւն Էֆէնտին ալ դուրս մնացած է այս ցանկէն ։ Կճանչնամ զինքն . ազատ միտքի տէր և բարի անձ մ'է . միանգամայն ձեռնտուութիւններ ըրած է և կընէ ազգին, արդեօք մասնաւոր պատճառ մը կա՞յ՝ որ արգելք եղած լինի անոր անունն ընտրելեաց ցանկին մէջ գրուելու ։

Գայթակղական պատմութիւն մ'ալ կը լսեմ այս մասին . կըսեն թէ վերջին ատեններս Ֆնտըգլեան Էֆէնտի ձեռնտուութիւն մ'ըրեր է ազգին . և խաբուած ըլլալով վըհատցեր է . ասոր վրայ՝ երբ եկեղեցական մը գացեր է այս օրերս իրմէն նպաստ մը խընդրելու, չէ տուեր խաբուած ըլլալուն համար ։ Կըսուի թէ այս պատճառաւ անոր անունը չէ գրուած ընտրելեաց ցանկին մէջ . արդեօք ստո՞յգ է այս . եթէ ստոյգ է, պէտք էր կանչել զինքն ու համոզել ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Եթէ ուրիշ դիտողութիւն ընող չկայ, հրաման կընդրեմ Ս. Նախագահէն որոյ նախագահութեամբ իր աշխատութիւնը կատարած է Ատենապետաց դիւանը պատասխանել եղած դիտողութեանց։

Ինչպէս որ ժողովը գիտէ, ըստ կանոնադրութեան Համագումար դիւանը Քաղ. ժողովոյ ընտրութեան գործը դիւրացնելու համար Սրբազան Պատրիարքի հետ խորհրդակցութեամբ զեղչելի ցանկ մը կպատրաստէ և ժողովը նոյն ցանկն ամբողջովին ընդունելէ ետեւ, անոր վրայ կամփոփէ իր ընելիք ընտրութիւնը ։ Ներկայ կանոնադրութենէն առաջ ժողովն ազատօրէն կքուէարկէր և կընտրէր Քաղ. ժողովոյ անդամները . բայց տեսնելով որ քուէները կցրուին և ընտրութիւնը կդժուարանայ, Կանոնադրութիւնն եկաւ ընտրելեաց զեղչելի ցանկի դրութեամբ ամփոփեց և դիւրացոյց ժողովին այս աշխատութիւնը ։ Բայց թէ ինչո՞ւ Համագումար դիւանին շինած ցանկն ամբողջովին Նախապէս քուէի կդրուի, ասոր պատճառն այն է որ ժողովն այս ցանկը վաւերացնելով ճանչցած և ընդունած ըլլայ զայն իբր իւր մէկ գործը ։ Ժողովն սոյն վաւերացումը կատարելէ առաջ իրաւունք ունի անշուշտ անոր վրայ քննադատութիւն ընել . բայց մինչեւ ո՛ւր կը տարածի սոյն իրաւունքը ։ Ըստ իս՝ երբ ժողովն Համագումար դիւանին կյանձնէ ընտրելեաց ցանկ պատրաստել, անշուշտ արտօնութիւն տուած կըլլայ անոր՝ 'ի դիմաց իւր այնպիսի անձինք ընտրել, որ միմեանց հետ քիչ շատ համամտութիւն և միանգամայն ընդունակութիւն և յանձնառութիւն ունենան պաշտօն վարելու . Ուստի երբ սոյն ցանկը կուգայ, ժողովն անոր պարունակած անուանց վրայ կրնայ ընել իր դիտողութիւնը և ոչ թէ այս կամ այն անձանց ցանկէն դուրս մնալուն վրայ ։

Հիմա կարգն եկաւ եղած երկու դիտողութեանց մասնաւոր կերպիւ պատասխանել ։ Առաջինն է Քօլօլեան Էֆէնտիի մասին եղած դիտողութիւնը ։ Քօլօլեան Էֆէնտի հրապարակաւ և կրկին կրկին յայտարարած ըլլալով որ իրեն համար անկարելի է նորէն Քաղ . ժողովականութեան պաշտօն

ընդունիլ, Համագումար դիւանն ամէնորդ դասեց անոր անունը դնել ցանկին մէջ, հրաժարմանց տեղի չտալու համար։

Իսկ Ֆընտըգլեան Լէֆէնտիի նկատմամբ եղած դիտողութեան գալով, անոր վրայ բնաւ խօսք չեղաւ Ատենադպրաց դիւանին մէջ։ Բայց թէ ինչո՞ւ նա ցանկին մէջ չէ գրուած, մասնաւոր ըսելիք մը չունինք։ Ատենադպրաց դիւանի ցանկէն դուրս թէ հրաժարեալ Քաղաքական Ժողովականներէն և թէ՛ դրսէն հարկերաւոր անձինք կան որ կրնային նոյն ցանկին մէջ անցնիլ և մեք չանցուցինք, զի մեզ 28 անձինք պէտք էին, զանոնք գտանք և անոնցմէ դուրս անձինք մնացին, հարկ չտեսանք։ Ես ալ կճանչնամ Ֆընտըգլեան Լէֆէնտին, պատուական անձ մըն է. բայց անոր վրայ դիտողութիւն մը երբէք չեղաւ Դիւանին մէջ. ուստի անտեղի է կասկած ընել թէ նա այս կամ այն պատճառաւ դուրս ձգուած է ցանկէն։

ԴԱԶԱՐԵԱՆ Գ. ԷՖ. — Ես եթէ Գօլօլեան Լէֆէնտիի մասին դիտողութիւնըրի, անոր համար էր որ թէ՛ ճշմարիտ անոր վերընտրելի ըլլալն որոշած է և թէ՛ ես անոր աշխատութիւնը ճանչն տեսած եմ. բայց նա վերընտրելի չըլլալու համար հրաժարական տուեր է կըսէք, այդ ուրիշ խնդիր է. եթէ այդ պատճառաւ միայն ցանկին մէջ չէ գրուած՝ ըսելիք չունիմ։

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ատենապետ փաշան ըսաւ թէ ցանկէն դուրս մնացողներ հարիւրներով կան. բայց մեր դիտել տուածն այն հարիւրաւորաց կարգէն չէ. թողունք Գօլօլեան Լէֆէնտին որոյ համար Քրիստոսատուր Լէֆէնտին դիտողութիւն ըրաւ, ես ալ լսած եմ թէ նա իրեն համար նորէն պաշտօն ընդունիլն անկարելի է ըսած է, և Ատենապետ փաշան կը հաստատէ թէ այդ պատճառաւ անոր անունը ցանկէն դուրս թողուած է։ Ես Ֆընտըգլեան Լէֆէնտիի համար դիտողութիւն ըրի, որ թէ՛ նախորդ Քաղ. ժողովոյ անդամներէն մէկն է և թէ ճշմարիտ անոր վերընտրելի ըլլալն որոշած է. փնճառական և տղայ դիրքի տէր անձ մ'է.

և մանաւանդ գայթակղական պատմութիւն մ'ալ լսած էի, ինչպէս պահ մ'առաջ յիշեցուցի, անոր համար հարցուցի թէ մի՛ գուցէ այդ պատճառաւ նա ցանկէն դուրս թողուած ըլլայ. հիմա գոհ եղայ որ առանց որ և է դիտման ցանկին մէջ չէ գրուած վերընտրելի ըլլալով հանդերձ։

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ. — Ես ալ դիտողութիւն մը պիտի ընեմ, բայց չէ թէ ընտրելեաց ցանկին պարունակութեանը նկատմամբ, վասն զի անոր մէջ նշանակեալ անձանց ամենն ալ ազգային պաշտօն վարելու կարողութիւն և յարմարութիւն ունին։ Ես սա՛ միայն պիտի ըսեմ թէ անցելոյն մէջ ունեցած փորձառութիւննիս աչքաց առջեւ բերելով՝ Քաղ. ժողովոյ անդամ ընտրենք այնպիսիներն՝ որ ազատութիւն ունին գործելու։ Թէ՛ այս և թէ՛ ուրիշ անգամ մեր ըրելիք ընտրութեանց մէջ իբր սկզբունք ընդունելու և գործադրելու ենք սա կէտը թէ՝ ազատ անձանց վրայ ամփոփուին մեր քուէները։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդրոյն առարկայն ընտրելեաց սա ցանկն է. իսկ Ամբրոսիոս վարդապետին դիտողութիւնը բուն ընտրութեան կվերաբերի։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Քաղ. ժողովոյ անդամ ըլլալու անձինք պէտք է որ արդէն ազգային խորհրդոց մէջ գործածուած փորձառու և հմուտ անձինք ըլլան. ես այս ցանկին մէջ մեծ մասամբ գեղաճաշներ կը տեսնեմ. արդեօք Համագումար դիւանն ինքնակամի տուած չէ՞ այս կէտը. Գօլօլեան և Ֆընտըգլեան Լէֆէնտիներուն համար հարցումներ եղան. ես ալ ուրիշի մը համար հարցում պիտի ընեմ, ինչո՞ւ Մագաղաթ Սիմոն աղէն ցանկին մէջ անցած չէ. Արդարեւ նախագահը քաջ գիտէ թէ չորս տարի առաջ Սիմոն աղէյ Քաղ. ժողովոյ ատենապետութիւն ըրած տանն ազգը մեծ ներողութեան մը ազատեց։ Ինչ պատճառ կայ այսպիսի անձինքը ձգել և նոր ու անփորձ անձինք դնել ցանկին մէջ։



ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դարձեալ՝ Արրագան Նախագահին հրամանաւ կուզամ պատասխանել նաև Մամիկոնեան Լէֆէնտիի դիտողութեան, որ երկու կէտ կպարունակէ. առաջին՝ կըսէ թէ արդէն ազգային խորհրդոց մէջ փորձուած հմուտ անձանցմէ պէտք է ընտրելեաց ցանկը լինել. այս դիտողութիւնն իրաւացի կըլլար եթէ այնպիսի կանոն մը ունենայինք. բայց չունինք։ Գալով երկրորդ կէտին՝ որ Մագաղաթ Սիմոն աղէյին կվերաբերի, մի և նոյն պատասխանը պիտի տամ, ինչ որ վարպետն մը առաջ տուի ուրիշներու առթիւ. Սիմոն աղէյ շատ պատուական անձ մըն է և ծառայութիւններ ըրած է ազգին. բայց ինչո՞ւ այս անգամ չէ գրուած ցանկին մէջ, մասնաւոր պատճառ չ'կայ. ուրիշ հարիւրաւորներ կան արժանաւոր անոնք ալ չեն գրուած։

Մինչ այս տեղ պաշտօնական պատասխան է Մամիկոնեան Լէֆէնտիի ըրած դիտողութեանը. հիմա մասնաւոր խնդիր մը պիտի ընեմ իմին որ չնորհ ընէ մեզ իմացունել թէ ո՞ր խորհուրդներն են անոնք որոց մէջ իւր փորձառութիւն ստացած էր երբ առնէ առաջ Քաղ. ժողովոյ անդամ ընտրուեցաւ, և ես գիտեմ որ բնաւ ծառայութիւններ ըրաւ Ազգին։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ — Այդ իմ պակասութիւն չէ. այն ատենի ատենադպրաց դիւանի յանցանքն է որ զիս ընտրելի ցոյց տուեր է։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բայց ինչպէս այն ատեն մաքերնիդ չ'եկաւ ինչ որ հիմա կը յայտարարէք մեր ընտրելեաց ցանկին համար։

Դիտողութիւնք վերջանալով, Քաղ. ժողովոյ ընտրելեաց ցանկին ամբողջութիւնը քուէի դրուեցաւ, և 5 քուէի դէմ 28 քուէով ընդունեցաւ ժողովէն։

Ատենապետ փաշան հրաւիրեց երեսփոխաններն ի քուէարկութիւն։

Քննիչ կարգուեցան վիճակաւ՝

| | | |
|---|---|---|
| Պօղոս | Լէֆէնտի | Թորգոմեան |
| Յակոբ | » | Արշակ |
| Մելքոն | » | Խաչէնտէրեան |
| Մարտիրոս | » | Տիլէեան |

Նախ՝ Կրօն. ժողովոյ ընտրութեան քուէարկութիւնը կատարուելով, քուէարկուաց թիւն յանգեցաւ 58ի։

Խաչատուր Լէֆէնտի Միսաքեան անուանական կոչման պահուն ձեռնպահ գտնուեցաւ սոյն քուէարկութեան մէջ։

Ֆէնէրճեան Յովակիմ Լէֆէնտին բացակայ ըլլալով կնքեալ նամակաւ ղրկած էր իր քուէն։

Ատենապետ փաշան յայտարարեց որ ըստ կանոնադրութեան երբ քուէարկումեան համար հրաւէր կերթայ երեսփոխանաց, կրնայ նամակաւ քուէ ընդունուիլ. սակայն ըստ որում Կրօն. ժողովոյ ընտրելեաց ցանկին տպագրեալ օրինակը շատ ուշ պատրաստուած ըլլալուն համար չէր ղրկուած երեսփոխանաց, և միայն Քաղ. ժողովոյ ընտրելեաց ցանկը ղրկուած էր, ուստի յայտնի չըլլալով որ Ֆէնէրճեան Լէֆէնտիի քուէն Կրօնականի՞ն թէ ոչ Քաղաքականին ընտրութեան կվերաբերի, խոհեմութիւն չէ զանի ընդունիլ. սակայն խնդիրը լուսաբանելու համար այս կէտին վրայ դեր ու դէմ խօսեցնելու պայմանաւ երկու հոգւոյ խօսք տուաւ։

ՔԱՐԱՔԱՇ Ն. ԷՖ. — Քանի որ ըստ կանոնի ներելի է նամակաւ քուէ ղրկել, կրնայ ընդունուիլ Ֆէնէրճեան Լէֆէնտիի ղըրկած քուէն։

ԴԱԶԱՐԵԱՆ Գ. ԷՖ. — Քանի որ Կրօն. ժողովոյ ընտրելեաց ցանկը հրաւիրագրոց հետ ղրկուած չէ երեսփոխանաց, և քանի որ Քաղ. ժողովոյ ընտրելեաց ցանկն ալ թէ և ղրկուած, բայց քուէնիդ նամակաւ ղրկեցէք ըսուած չէ. չկրնար ընդունուիլ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ յայտնի

չէ թէ Ցէնկրճեան Լեֆէնտիի քուէթուղթը կրօն. ժողովո՞յ թէ ոչ Քաղ. ժողովոյ համար է, ասանկ անստուգութեան մէջ չընդունուելն աւելի խոհեմութիւն է ։ Զայս ըսելէս ետեւ ժողովին միտքը հարցնեմ, Ցէնկրճեան Լեֆէնտիի քուէնամակը կընդունի՞ թէ ոչ ։

Ժողովը քուէով անընդունելի վճռեց յիշեալ քուէթուղթը ։

Ցետոյ Քաղ. ժողովոյ ընտրութեան քուէարկութիւնը կատարուելով, քուէարկուաց թիւն յանգեցաւ 57ի ։

Սոյն քուէարկութեան մէջ անուանական կոչման պահուն բացակայութեան պատճառաւ չպատասխանեցին՝

Ալիքսան Լֆէնտի Պէշիրեան
Մելքոն » Փափազեան

Քուէարկութիւնն աւարտելէ ետեւ, Ատենապետ փաշային առաջարկութեամբ և ժողովին հաճութեամբ քուէհամարի գործողութիւնն ետքի վերապահուելով, ժողովն անցաւ Օրակարգի երկրորդ խնդրոյն ։

Սոյն պահուն Ատենապետ փաշան միջանկեալ կերպով յիշեցուց ժողովին թէ Ազգ. Հիւանդանոցին նկատմամբ ժողովրդական բողոքագիրներ մատուցուած է դիւանին, սակայն ոչ ստորագրութիւնները վաւերացեալ են ըստ կանոնի և ոչ Պատրիարքարանի դիւանատան արձանագրութեանց անցած է, և յաւելցնելով թէ թերեւս բողոքները չգիտէին այս կանոնական կէտերը, կյանձնեմ, ըսաւ, դիւանապետին՝ որ կանոնական պակասները լրացնել տայ և ապա բերէ ժողովիս ։

Ժողովն այս յայտարարութիւնն ընդունեց առանց դիտողութեան ։

## Բ.

## ՊԱՏԱՍԽԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ. ՎԱՍՆ ՀԱՐՑՄԱՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ժողովը գիտէ որ անցեալ նստին 12 երեսփոխանաց կողմէ հարցում մը ներկայացուեցաւ ըսելով. « տեսնելով որ Պոլսոյ ասպարէզին իր գործողութիւններն աւարտած է, և ի հարկէ Հայոց խնդրոյն նկատմամբ ալ որոշում մը տուած, կխնդրենք Ս. Պատրիարք Հօրմէն՝ որ հաճի մեզ այս մասին պէտք եղած տեղեկութիւնը հաղորդել այսօր »։

Անցեալ նստին Ս. Պատրիարքը բացակայ էր, և ըստ որում անեն հարցման անմիջապէս պատասխանել անկարելի է, ըղձեցինք նորին Սրբազնութեան հարցումը՝ որ շնորհ ընէ պատասխանել այսօր ։ Նորին Սրբազնութիւնն իր պատասխանը գրով հաղորդած է դիւանին. կհրաւիրեմ Միրեան Տ. Յովհաննէս հայրն որ բեմն ելնէ և հաճի զայն կարդալ ։

Անմիջապէս Միրեան Տէր Հայր բեմն ելնելով կարդաց հետեւեալը ։

Տեարք երեսփոխանք.

Ամիս մ'առաջ սոյն այս պատկառելի ժողովին մէջ պատասխանելով հարցման մը զոր ազգասէր ոմանք երեսփոխանք կ'ուղղէին ինձ Ազգային խնդրոյն նկատմամբ, եւրոպական տէրութեանց քով մեր ըրած ջանքերը և գտած համակրական ընդունելութիւնը զինի յառաջ բերելու, կրկնէի ձեզի. « Ես չեմ միայն աշխատող, այլ իմ է բոլոր պատասխանատուութիւն »։

Դեռ ժամը չը հնչեց՝ ամփոփ'ղ այս պատասխանատուութեան. զի կրկին է նա. մին այսօր Հայոց այս մեծ ժողովին առջեւ, և



միւսը Ազգին առջեւ, յանցեալն, 'ի ներկայն և յապագայն ։ և պատմութեան առջեւ ։ Այո', ես այս պատասխանատուութիւնը շատ աւելի ծանր զգացի քան զոր կրնաք երեւակայել, և շըզգացի զայն՝ միա'յն ձեր առջեւ որ այսօրուան ազգը կը ներկայացնէք, այլ և զգացի' զայն՝ մեր Նախնեաց հոգիներուն ու յիշատակին առջեւ՝ որ կանգնեցին և որ պահեցին զՀայ ազգն ու զՀայաստան, և զգացի զայն՝ այն անհամար Հայ սերունդներու'ն առջեւ՝ որք պիտի յաջորդեն մեր սերունդին ։ Եթէ երկրորդն այս պատասխանատուութեանց շատ աւելի ծա'նր է ու ահեղ քան զառաջինը, ներեցէ'ք ըսել հիմակուց՝ ես այդ պատասխանատուութենէն բնաւ չեմ վախնար. զի ամբողջապէ'ս ունիմ պատասխանել, և խղճմտանքս անդորր է և զուարթ ։ իսկ աւելի փափուկ է առաջին պատասխանատուութիւնս, այն որ կոչեալ եմ այսօր կատարել ձեր առջեւ, և եթէ իմ բացատրութիւններս գոհ չ'ընեն զձեզ, ուրիշ բան չ'մնար ինձ ընել, այլ պատմութեան դատաստանին ապաւինիլ. որուն ենթարկեալ ենք ամենքս ալ, ե'ւ ես, ե'ւ դուք. ե'ւ որք այս շրջապատէս դուրս կը խօսին և կը գրեն ։

Եւ զայս ըսելով ո'չ թէ բնաւ նուազ կուզեմ զգալ ձեր դատելու իրաւունքն ու իշխանութիւնը, այլ զի յանուն ազգային պատկառելի շահուց, պէտք է նախամեծար համարիմ կրել դատապարտութիւն անիրաւ՝ նա'եւ Ազգիս կողմէն, քան թէ հրապարակել զամենայն ։ Եւ եթէ ամեն տեսակ հալածանք, դատապարտութիւն, պատիժ և փորձութիւն յանձս չէի առած առաջին օրէն, զգուշացնելով զայլս այն ամենէն և զիս միայն կէտ նպատակի ընծայելով. եթէ յանձըս չէի առած զոհուիլ, ինչո՞ւ ուրեմն ձեռնարկեցի յայս գործ ։

Տեա'րք Երեսփոխանք.

Հայկական խնդիրը, իր արդի ձեւին մէջ ինքիրմէ չ'ծնաւ. այլ ընդհանուր Արեւելեան խնդիրէն ծագեցաւ ։ Ահաւասիկ ինչպէս ։ Հայոց խնդիր մը կար տասն և աւելի տարիներէ ի վեր, մինչդեռ ո'չ Հէրսէկ—Պօսնայի խնդիր կար, ո'չ Պուլկարաց խնդիր քաղաքական ձեւով ։ Հայաստանի Հայոց կրած հարստահարութեան խնդիրն էր այն. Ազգին ու Տէրութեան մէջ մնացած էր. և Ազգը անընդհատ տասը տարի, իր յանձնաժողովներովը, իր Քաղ. ժողովներովը, իր Երեսփոխանական ժողովներովը, իր Պատրիարքներովը, այս հարստահարութեանց բարձումը կը հայցէր բարձրագոյն Դռնէն ։ Ահա' այս էր միայն Հայոց խնդիրը ։ Եկաւ Հէրսէկ—Պօսնայի խնդիրը՝ և ապա Պուլկարիոյ խնդիրը ։ Այս երկու խնդիրներուն մէջ խառնուած էր հարստահարութեան խնդրոյն հետ ազգային ինքնօրինութեան խնդիրն ալ ։ Այս գաւառները ապստամբութեան դրօշը պարզեցին իրենց օրինաւոր Տիրոջը դէմ ։ Արիւնահեղութիւնը՝ Եւրոպայի միջամտութիւնը հրաւիրեց, և այս մեծ կայսրութեան դրացի ուրիշ մեծ կայսրութիւն մը յանուն Քրիստոնէութեան ամենէն աւելի ձայն բարձրացուց. Տէրութիւնք 'ի ժողով գումարեցան 'ի Պոլիս ։ Ի՞նչ ըրաւ Հայոց Ազգը. օրինաւորութենէն դուրս չելաւ. Հայերը գոհ էին որ Օսմանեան Տէրութեան ներքեւ էին. այլ իրենց վիճակէն դառնապէս դժգոհ էին. և որովհետեւ ընդհանուր քրիստոնէից վիճակը բարւոքելու խօսքեր կ'ըլլային, Հայերն ալ ընդհանուր բարեկարգութենէն սպասեցին իրենց վիճակին բարւոքումը ։

Ձեր Պատրիարքը, գիտէք արդէն, Տեա'րք Երեսփոխանք, պարապ չ'կեցաւ. աշխատեցաւ Բ. Դրան քով, աշխատեցաւ դեսպանաց քով ։ Այլ դեսպանաժողովը փոխանակ ընդհանուր վիճակին բարւոքումը նկատողութեան առնելու, նկատողութեան առաւ միայն Հէրսէկ—Պօսնայի և Պուլկարաց խնդիրները ։ Ասի անիրաւութիւն մըն էր մնացեալ քրիստոնեայ ժողովրդոց, և ներեցէք ըսել, թերեւս իմ սահմանէս քիչ մը դուրս ելնելով, Օսմանեան կայսրութեան ալ քաղքայումը կը պատրաստէր՝ ապստամբութիւնը քաջալերելով ։

Օսմանեան կայսրութիւնը դեսպանաժողովին այս որոշումը չընդունեց. և մեք Հայ-

մեր ազգային խնդրոյն կատարմանը նկատմամբ․ այլ լրջութիւնք զօրաւորագոյն են քան զամենայն՝ և վճռարար կը հրամայեն նոցա տէրութեանց քաղաքականութեան։ Անգղիոյ մեծ ազգին քաղաքականութիւնը՝ որուն յայտնի են շահերը, նպատակն ու համակրութիւն, կրնայ ի սկզբան այնպիսի ձեւ ու ոգի մը զգենուլ՝ որ իր յաւիտենական կզզին մնանքենաւորապէս պատող Ովկիանոսին պէս ինքն իրեն դէմ մարտնչելով՝ թէ և չ՚յոգնի, չ՚պարտասի, այլ՝ զի պէտք է յաղթողի, հա՛րկ պիտի զգայ վերջապէս նոր ոգի ու նոր ձեւ առնուլ։

Իսկ մեք, տխարք Նրեսփոխանք, մենք յարատեւե՛նք մեր սկսած գործին մէջ։ Այսպիսի գործեր ո՛չ մէկ օրուան մէջ, ո՛չ մէկ մարդու ձեռքով կրնան կատարուիլ։ Պատրաստուինք մեր ապագային։ Նախ չ՚կենանք հոս, Հայաստա՛ն երթանք, Հայաստա՛ն զրկենք ինչ որ ունինք ազգին մէջ բանիբուն, տաղանդաւոր, ազգասէր, ուսումնասէր եկեղեցականներ, Հայաստա՛ն երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվռուն երիտասարդներ, Հայաստա՛ն երթան մեր արուեստագէտներ, վաճառականներ, Հայաստան երթան մեր այնքան դժբաղդ պանդուխտներ․ ո՛չ եւս հարստահարութիւն․ ո՛չ եւս կենաց և ընչից և պատուոյ առեւանգութիւն, ո՛չ եւս աշխատութեան խափանում․ ուղիներ պիտի բացուին․ ջրանցքներ պիտի շինուին․ գործարաններ պիտի կառուցուին․ Անգղիոյ դրամատէրք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու․ թո՛ղ երթան մեր դրամատէրքն ալ․ ընկերութիւններ կազմեն այս օրուընէ․ ընկերութիւններ ամեն քաղաք և գիւղ դըպրոցներ հաստատելու համար, ընկերութիւններ առեւտրական յարաբերութիւններ հաստատելու համար․ ընկերութիւններ գործարաններ հաստատելու համար․ Հնդկաստանէն, Հայաստանէն, Անգղիայէն, Թուրքիայէն, Ռուսիայէն, Աւստրիայէն ու մինչեւ Պարսկաստանէն միանան ձեռք ձեռքի տան բոլոր Հայերը․ և այն ատեն թերեւս ես ալ ցաւագար ու անբուժելի հիւանդութեամբ վարակեալ․ ի գերեզման իջած ըլլամ արդէն, այլ տեսնելով այսքան ազգային միաբերտ, միահոգի աշխատութեան գեղեցիկ արդիւնքները, տեսնելով պահուած մեր այսօրուան բոլոր յոյսերը՝ հոգիս պիտի խայտայ գերեզմանիս մէջէն և պիտի ընդգրկէ մեր սիրելի նախնեաց հոգիները․․․։

1878 Յուլիս 21/2 Օգոստոս

Խօսեցեալ

ի Ն․ Նստի Ընդհ․ Ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ․ — Լսեցէք Սրբազան Հօր պատասխանն այն խնդրոյ՝ որով 12 երեսփոխանք տեղեկութիւն կ՚ուզէին Հայոց խնդրոյն նկատմամբ Սրբազան Հօր տարած ջանից արդիւնքին վրայ։ Ի հարկէ այսպիսի հարցման մը այսպիսի պատասխան մ՚առնելէ ետեւ, Ժողովը կպարտաւորի իր կամքը յայտնել։ Կտեսնէք որ Նորին Սրբազնութիւնն երկու առարկութիւններ կյիշատակէ իր գրոյն մէջ․ մէկն ի ներքուստ և միւսն արտաքուստ պատահած․ առաջին առարկութիւնն ընողները կըսեն թէ Սրբազան Պատրիարքը և իւր գործակիցք դիտմամբ այս ձեւը տուին Հայոց խնդրոյն՝ որպէս զի չյաջողի կամ անկատար մնայ․ ըսել կուզեն թէ դաւաճանութիւն գործուած է․ իսկ երկրորդ առարկութիւնն՝ որ օտարէն կուգայ, կ՚ըսէ, այն է թէ այս խնդիրը Հայոց ազգին խնդիրը չէ, այլ Պատրիարքն հնարած է զայն․ ազգը իր վիճակէն գոհ է, Պատրիարքն է վեր ի վայր յուզողը զայն։ Այս երկու տեսակ առարկութեանց համար Սրբազանը Ժողովին վճիռը կ՚ուզէ իմանալ․ [illegible]։ Եթէ կմերժէ և վստա՛հ է որ Ս․ Նախագահն իրեն յանձնուած խնդրոյն համար ամենայն ուղղութեամբ աշխատած է, կրնայ իւր կամքն յայտնել անմիջապէս քուէարկելով սա՛պէս Օրակարգ մը։

«Ազգային ժողովը Հայկական խնդրոյ վրայ Ս․ Պատրիարքին տուած տեղեկութիւններ լսելով, հիմնելէ, անոր ազգասիրական ջանից դէմ ի ներքուստ և յարտաքուստ եղած առարկութիւններ, և իր գոհունակութիւնը յայտնելով և վստահութիւնը երկրորդ անգամ՝ յայտարարելով կանցնի իր Օրակարգին»։

Իսկ եթէ Ժողովը կ՚ուզէ նաեւ խնդրոյն ամեն պարագայից մանրամասն տեղեկանալ, վիճաբանիլ անոր վրայ և այս որոշում առնել, պէտք է փոքր մը համբերութիւն ընէ, զի այսօր անմիջապէս խնդրոյն վրայ վիճաբանութիւնք բանալ անկարելի է, նախ՝ Ժողովի մի և նոյն Ս․ Պատրիարքի պատասխանն ունի ՚ի ձեռին, և զայն մի անգամ լսած է ՚ի բեմէ․ պէտք է տպուի նա և ամեն մարդ ի մատուցիլ, որպէս զի վիճաբանութեան սահուն բովէքը գիտնայ․ ա․ կէ զատ խնդիրը փափուկ և աշխարհաքաղաքական կէտեր կը պարունակէ և դեռ կատարելապէս վերջացած չէ․ Սրբազան Պատրիարքը անոր ամեն պարագաներն այժմէն հրապարակելու խօսք չի տար․ [illegible]։ Այնպիսի պարագայից մէջ նախ պէտք է որոշել թէ խնդրոյն վրայ վիճաբանիլ [illegible]․ եթէ այս, [illegible], իսկ եթէ ո՛չ․ առաջարկած Օրակարգս քուէարկելու և անցնելու է, մինչեւ որ ժամանակը գայ և ամենայն ինչ ՚ի հրապարակ հանել հնար ըլլայ։ Ա՛հա այս կէտերն որոշելու համար թէր ու դէմ խօսելու պայմանաւ մէկ քանի հոգիի խօսք կըրնամ տալ։

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ․ ԷՖ․ — Խնդրոյն խորը մտնելու մասին չեմ ուզեր հիմա խօսիլ․ միայն կէտ մը կայ՝ զոր սահմանական կնկատեմ և պարտաւորութիւն կհամարիմ ինձ այժմէն խօսիլ․ ըստ որում Սրբազան Հօր ատենապանութեան սկիզբէն մինչեւ նոր նըկարագրածներէն լսեցինք և հասկցանք որ ազգին խնդրածն ինչ որ էր՝ [illegible] չէ ուզեր զայն ընդունիլ։ Յայտնի էր որ Ազգին խնդրածը Վեհ․ Սուլթանին գերիշխանութեանն և Եւրոպական տէրութեանց հովանաւորութեանը ներքեւ Հայաստանի համար ինքնօրինութիւն էր։ Այս էր առաջին Քոնկրէին ղրկուածը, որ հարկաւ խորին տպաւորութիւն բրած է Ազգին վրայ․ և ինչպէս որ Ս․ Պատրիարքը կը յայտարարէ թէ փութացեր է անմիջապէս յանուն Ազգին իւր ցաւն յայտնել, նոյնպէս և ես կ՚առաջարկեմ յանուն Ազգ․ Ժողովոյ՝ դժգոհութիւն յայտնել Քոնկրէին որոշմանը դէմ, որպէս զի չկարծուի թէ Հայ Ազգն անտարբեր է իւր շահուցը։

ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ Թ․ ԷՖ․ — Դիւանը խնդիրն այս Ժողովէն վերցնելու համար նախավճռի առաջարկութիւն մը կարդաց․ անոր դէմ պիտի խօսիմ։ Ինձ հրաւիրագիր մ՚եկած է օրակարգով մը, որուն մէջ կտեսնեմ որ 12 երեսփոխանաց հարցման մասին Սրբազան Հօր տալիք պատասխանն օրուան խնդիր նշանակուած է։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ․ — ([illegible]) միայն այն պատասխանը լսելու համար, անոր վրայ խօսիլն ետքէն պիտի որոշուի։

ՊԷԿՆԵԱՆ Թ․ ԷՖ․ — ([illegible]) Եւ որպէս զի Ժողովը նախավճռով չմերժէ և չը վերցնէ խնդիրը, բացատրութիւններ պիտի տամ, և պիտի յայտնեմ թէ այս խնդրոյն մէջ մեքենայութիւններ կնշմարուին․ ես [illegible] գրութիւններ ի ձեռին պիտի խօսիմ և Ժողովին մեծամասնութեան հաճութիւնը պիտի տանամ թէ քննութիւն ընել և խնդրոյն խորը թափանցել պէտք է․ մի՛ զարմանաք՝ եթէ ըսեմ թէ գաղտնի ձեռք մի՛ ազգէն դուրս օտար ճիգփթութիւն մը՝ կարող եղած է այս բաներն ընել։ Եթէ այսօր թոյլ չտրուիր ինձ խօսիլ, գո՛նէ ուրիշ օր մը որոշեցէք՝ որ բոլոր պէտք եղածները խօսիմ․ [illegible] ի ձեռին պիտի հաստատեմ թէ մեր վէրք մ՚ունէինք, մեր բուն վէրքը չյայտնեցինք [illegible]․ սա անպիտան գրութիւններով մեր վիճակը կեղծեցինք՝ խարեցինք

Քննէլեն, և հիմա կզանգատինք թէ ինչո՞ւ բժիշկները պէտք եղած դարմանը մեզ չտուին. բժիշկները ցուցուած հիւանդութեան համեմատ դեղ կուտան. մենք մեր հիւանդութիւնը կեղծեցինք. ուստի տրուած դեղն ալ կեղծ էր. մենք դե՛ղ ալ ցոյց տուինք բժիշկին և ի՞նչպէս. մեզի օրինակի համար «[illegible]» պէտք էր, «[illegible]» տուր ըսինք, ինչ տարօրինակ բան։

Տեարք երեսփոխանք. առանց խնդրոյն խորը մտնելու ընդհանուր տեսութեամբ միայն ձեր ուշադրութիւնը կ'հրաւիրեմ, որպէս զի այս խնդիրը ժողովէն դուրս նետելու առաջարկութիւնը չընդունելով՝ օր մը որոշէք խնդրոյն խորը մտնելու և ամեն մանր պարագաները քննելու համար։ Կըսեն թէ քաղաքական տեսակէտէն ներելի չէ մեր ազգային խնդրոյն վրայ այժմ խօսիլ, մինչդեռ պատգամաւորներ գրկուեցան ամեն տեղ և ամեն բան Եւրոպիոյ ամեն կողմ հրապարակեցաւ. մինչև [illegible] ծածկագրութ՛ ամենէն ծանր խնդիրներ յուզուեցան. մեր Պատրիարքը խաբուած է. խաբուած են նաև անոր գործակից Եպիսկոպոսունք։

ՄԻՐԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ.— Ժողովէն միայն խնդրեմ որ արտօնութիւն տայ Գլխեան էֆէնտիին ինչ որ կուզէ հոս խօսիլ։

ԱՏԵՆԱԴՊԻՐ ՓԱՇԱ.— Սրբազան Հայր ձեր տուած պատասխանէն բղխած խնդիր մ'է այս, որոյ վրայ եթէ ժողովն ուզէ վիճաբանիլ, պէտք է նախապէս նախագահին մարմնոյ մը կողմէ խմբագրուի, և ընդհանուր մը դայ, որպէս զի վիճաբանութեան հիմունք ունենանք. թերևս նախագահութիւնը ցոյց պիտի տայ մեզ թէ առժամս այս վիճաբանութիւնն «անօգուտ» է և կամ «վնասակար»։ Այսօր դեռ անպատրաստ է ժողովս և չկրնար վիճաբանիլ. ինչպէս կրնանք թողուլ Գլխեան Էֆէնտիին որ այսօրուընէ խօսի խնդրոյն ներքին պարագայից վրայ, մանաւանդ որ շատ յուզեալ է և խստութեամբ կը գործածէ ատենախօսութեան իրաւունքը։ Ուստի կը խնդրեմ Գլխեան էֆէնտիէն՝ որ համդարտութեամբ խօսի. կրնայ թէ ձեռքն առաջարկներ ունի Ազգին խորհրդատուները ընդնողները խայտառակելու. շատ աղէկ. թող վերապահէ այն ատենին՝ որ ժողովն ուզէ խնդրոյն մանր պարագայից քննութեանը մտնել։ Այսօրուան համար այսչափը բաւական է. ասկէ աւելի խօսելու չ'ենք կրնար ներել, մանաւանդ որ այժմ Գլխեան էֆէնտի այնպիսի բաներ կը գործածէ յաւմանի, որ կերթան հարկանել այն անձն՝ որ ամենուն պատասխանատուութեանը պատուեալ է։

ԳԼԽԵԱՆ Թ. ԷՖ. — Խօսք կուզեմ։

ԱՏԵՆԱԴՊԻՐ ՓԱՇԱ. Չեմ կրնար կրկին խօսք տալ ձեզ, Գլխեան էֆէնտի. բաւական աւելի խօսեցաք և ծանր ու թշնամական ակնարկութիւններ ըրիք այս ժողովին պատուելեաց անձի մը դէմ, մինչդեռ միայն այն կէտին վրայ խօսելու էիք՝ թէ պէ՞տք է այս խնդիրը քննութեան ենթարկել թէ ոչ։

Աս միջոցին Գլխեան էֆէնտի բանի խօսել ուզելուն համար Ատենապետ փաշան կանոնադրութեան ի ձեռին յիշեցուց որ ներելի չէ ատենադրանի մը խօսիլ երբ Ատենապետը չուզէ խօսք տալ, և եթէ բռնանայ՝ Ատենապետը կարգապահօրէն զինքն ի կարգ հրաւիրել։

ԳԼԽԵԱՆ Թ. ԷՖ. — Ժողովին հարցուցէք միթէ կուզէ՞ որ խօսիմ։

ԱՏԵՆԱԴՊԻՐ ՓԱՇԱ. — Դուք՝ Գլխեան էֆէնտի, իրաւունք մ'ունիք միայն ըսելու որ խնդիրը փոխանակ նախաձեռնով վերցնելու պիտի խմբագրենք և քննենք. այդ իրաւունքէդ ի գործ դրէք բայց դեռ ժողովի խնդրոյն խորը մտնելու որոշում չտուած այնպիսի բաներ գործածել սկսաք, որ ժողովս նախագահ Ս. Պատրիարքին պատասխանատու պէտք կը մեղադրէք. ուստի կը հրաւիրեմ զձեզ ձգել ըսելիք՝ որպէս զի ուրիշներն ալ որ խօսք ուզած են՝ ատենախօսեն։



ԳԼԽԵԱՆ Թ. ԷՖ. — Նոյէ այսպէս բռնադատութիւն պիտի ընէք, անկարելի է որ ես կարող ըլլամ խօսիլ այս խնդրոյն վրայ։

ԳԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ես կառաջարկեմ որ Սրբազան Հօր տուած պատասխանը ատենադրութեան մէջ արձանագրուելէ և ետև Օրակարգն անցնի՝ վիճաբանութեան դրուելու համար։

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ.— Անցեալ նստին Սրբազանին հարցում ուղղող երեսփոխաններէն մէկն ալ ես ըլլալով, պատասխանն ալ լսեցի. Սրբազանը բարեհաճեր է իր տուած պատասխանին մէջ ամենածածուկ նկատողութիւններ ընել Հայկական խնդրոյն վրայ. ինծի առաջ խօսող երեսփոխան էֆէնտիին զանազան դիտողութեանց վրայ Հայոց խնդիրը թէ՛ յաջող և թէ՛ ձախող վախճան մ'առած ըլլի, տակաւին տարակոյս չկայ որ Երեսփոխանութիւնը պարտաւոր է իր փառաւորութիւնն ու շնորհակալութիւնը յայտնել այն անձանց՝ որք այս խնդրոյն մէջ աշխատեցան. բայց ինչպէս որ երեսփոխաններէն ոմանց՝ այնպէս և ինծի համար՝ Հայոց խնդիրը լինցած կնքատուի, քանի որ Պէրլինի Համաժողովը վճիռ մ'արձակած և կնքած է, այս խնդրոյն մէջ թէ Ս. Պատրիարք Հօր և թէ՛ գործակցող Եպիսկոպոսաց աշխատութիւնն ու ջանքութիւնը յայտնի են. Ժողովս ալ իր կողմէ պէտք եղած վստահութիւնն անոնց զլացած չէ այս մասին։ Ես որովհետև Հայոց ազգին երեսփոխանութեան ամենամեծ իրաւունքն է կատարեալ տեղեկութիւն առնել այս խնդրոյն մէջ ի գործ դրուած աշխատութեան ձևին և եղանակներուն վրայօք, որպէս զի գործին մեր ուզած կերպով չյաջողելուն պատճառներուն ինչ ըլլալն որոշակի իմանանք, և զի Ժողովս ալ միևնոյն պատասխանատուութիւն ունի պատմութեան առջև, ինչ որ ունի իր Նախագահ Սրբազանին, որոյ կատարելապէս արտօնութիւն տուած էր իր տեղ գործելու և աշխատելու Հայոց խնդրոյն համար. ուստի ես ինծի առաջ խօսող երեսփոխան էֆէնտիին տեսակէտէն տարբեր տեսակէտով մը կառաջարկեմ որ առանց նախաձեռնով խնդիրը գոցելու, յատուկ նստի մը մէջ մանրամասն քննութեան ենթարկուի և բոլոր եղած գացած գրութիւնները նայուի. Այս քննութիւնը կրնայ թէ՛ բաց և թէ՛ գոց նստի մէջ կատարուիլ, ինչպէս որ ուզէ Ազգային Ժողովը. բաւ է որ բոլոր գրութիւնները կանխաւ տպուին և երեսփոխանաց ցրուին, որպէս զի իրազեկ ըլլան ամեն մանրամասնութեանց՝ այսինքն ինչ որ Ս. Ստեֆանոյէն սկսաւ և Պէրլինի մէջ վերջացաւ, ամբողջովին քննութեան ենթարկուի. այս քննութեան բովէն անցնել չհասցուի նաև Վեհ. կաթողիկոսին հետ եղած բանակցութեան արդիւնքը. մի յատուկ պատգամաւոր մը ինչո՞ւ Վեհ. կաթողիկոսին զրկուեցաւ և անիկէ ինչ պատասխան առաւ, մինչև ցայժմ չիմացանք։ Ս. Պատրիարք Հօր տուած պատասխանին մէջ այս մասին յիշատակութիւն մը չենք տեսներ։ Ես որովհետև խնդիրը փափուկ է և տիրապետական կառաջարկեմ անմիջապէս յաջորդ նիստը յատկացնել այս խնդրոյն քննութեան։

ԶՕՅՆԷՐ. — Կը կրկնենք Ամբրոսիոս վարդապետին առաջարկութիւնը։

ԳԱՌՆԱՄԵԱՆ Գ. ԷՖ. — Գլխեան էֆէնտի ուզեց իր սկսած խօսքը շարունակել, բայց խօսքը կտրեցուեցաւ իրեն. թերևս իր խօսքերէն օգուտ պիտի քաղուէր. սակայն որովհետև այսօր խնդրոյն խորը մտնելու արտօնութիւն չ'տրուիր, կառաջարկեմ որ մասնաւոր նստի մը մէջ վիճաբանուի այս խնդրոյն վրայ, և Սրբազան Հօր յանձնարարուի որ առոր վերաբերեալ ինչ գրութիւններ որ կան՝ անոնց ամենը հաւաքէ և բերէ ժողովին, որպէս զի այն ատեն չէ թէ անգիտաբար, այլ կատարելապէս գիտակցութեամբ դատենք։

Ազգին մէջ վստահութիւն մը կանհետի, որպէս թէ Պէրլինի Համաժողովը Հայոց

խնդրոյն արդիւնաւորութեան լուծում մը տուած է · տարի դէմ բողոք ընելով օգուտ մը չենք քաղեր ։ Կոստանեան որ Պէրլինի դաշնագրին 61դ յօդուածը Հայոց բնակած տեղերուն համար բարենորոգում տրամադրած է , և թէ մեր պէտքէ համեմատ բարենորոգմանց ծրագիր մը չընել և գործադրել տալ կարող ըլլանք՝ այն ատեն Հայոց խնդիրը գոհացուցիչ կերպով լուծուած կըլլայ · միայն թէ պէտք է ցոյց տանք թէ մեզ կարողութիւն և ընդունակութիւն ունինք բարենորոգումները գործադրել · ասկէց զատ · · ·

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ· (ընդմիջելով) — Կ՚երեւայ՝ Գառնաւեան էֆէնտի , չափը կ՚անցնի թող տալ որ չարունակէք · մանաւանդ խնդրոյն խորը կ՚մտնէք · բաւ է որ դուք ալ քննութիւն կառաջարկէք , այդ չէ՞ մեր ըսածն ալ ։

Գառնաւեան էֆէնտի դարձեալ խօսիլ ուզեց , բայց Դիւանն արգիլեց ։

(Աղմուկներ)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ·— Կ՚աղաչեմ ուշադրութիւն ըրէք · Սրբազան Հօր տուած պատասխանը՝ պէտք էր կամ պարզապէս նախագահով վերցնել դիւանէն , և կամ յղել նախաքննութեան և տեղեկագիր գալէ ետեւ խնդրոց կարգն անցնելով Օրակարգին՝ վիճաբանութեան ենթարկել ։ Բայց ժողովս այս կէտին վրայ վիճաբանել հրաւիրեցի · բայց գծրագրական ատենադպրէն տեսանք այժմէն մտնել կը թեւակոխեն խնդրոյն խորը և ժողովականաց միտքը նախապաշարել կը նկրտին · ես չեմ կրնար ներել որ վիճաբանութիւնն այսպէս շեղի իր ուղղութենէն . տարը համար խօսութիւն բանեցունել կ՚սախալուիմ · կ՚աղաչեմ մարդ թող չը վրդովուի ։ Եթէ ես այսպէս չ՚վարուիմ , խնդրոյն մէջէն դուրս ելնելիք չ՚ունինք ։ Հիմա քանի՛ որ մէկ քանի Երեսփոխան խնդրոյն քննութեան ենթարկութեանը թեր խօսեցաք · կը հարցունեմ միթէ դէմ խօսիլ ուզող ալ կա՞յ ։

ՄԻՆԱՍԵԱՆ ՅԱԿՈԲ ԷՖ· — Ես դէմ պիտի խօսիմ Սրբազան Հօր տուած պատասխանը միայն ընելէ ետեւ · Դիւանն բաւ թէ կամ նախագահով պէտք է վերցնենք և կամ նախաքննութեան յղել ետեւ Օրակարգին անցնինք ։ Աւոր վրայ պիտի խօսէի · բայց մինչեւ հիմա խօսող քանի մը երեսփոխանք խնդիրը բնական ճամբէն խոտորեցուցին իւրաքանչիւրն մէկ մէկ տեսութեամբ · մէկը զժգոհութիւն յայտնեց Քօնկրէին Հայոց խնդրոյն նկատմամբ ըրած որոշմանը դէմ , միւսը վտանգներ յառաջ նետելով նախապաշարել զմեզ ։ Բայց Սրբազանին պատասխանն ուշի ուշով մտիկ ընողները տեսան որ մեզի այնպէս մը զգացնել կուտար թէ խնդիրը տակաւին վիճաբանելու վիճակին հասած չէ · Սրբազանին սա խօսքերը կ՚ըսեմ · կրնայ թէ եթէ ամենն ալ մի՛ գործերը ըսել ին՝ ես դարձեալ պիտի գործէի ։ Թող փոյթն այս կէտն ուշադրութեան առնու և անկէ ետեւ եթէ ուզէ՝ թող նախաքննութեան յղէ և վիճաբանութեան ենթարկէ ։ Եթէ խօսք վտանգներ ալ ըլլան · մեր պարտքն այն է որ գործին մէջ աշխատողներուն եռանդը մաղթ՝ չափ մարել զգուշանանք · չէ նէ գործը կասեցնելով վտանգն երեւան կ՚գնենք և կառնենք կնասինք ։

Ինձ կ՚թուի թէ ամենէն կարճ ճամբան՝ Սրբազանին առաջարկած քուէ տալն է և այս կերպով ապահովել գործին ընթացքը կասեցնել պատճառ չեմ տեսներ · չ՚ու չ՚ու կըսեն թէ Սրբազանը խաբուեր է , չէ թէ նենգեր է · մանաւանդ չափ կասկածելու տեղի չկայ այս կէտն ալ վերջէն կրնանք քննութեան ենթարկել ։ Կ՚եզրակացնեմ ըսելով թէ Սրբազանին առաջարկած քուէն պէտք է այժմ տրուի · անկէ ետք՝ նախաքննութեան յղել պէտք է թէ ոչ՝ դարձեալ կրնայ որոշուիլ ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ·— Խօսող երեսփոխանաց կարծիքն երկերիւ բաժնուած կը տեսնեմ ։

Քափամաճեան էֆէնտի՝ չէ թէ Սրբազանէն համար պահանջել , այլ Քօնկրէին



ըրած որոշման դէմ բողոք բառնալու կարծիք կը յայտնէ ։

Պէկեան էֆէնտի՝ գործին մէջ դաւաճանութիւն կայ ըսելով՝ ազգը վտանգէ փրկելու համար խուզարկութիւն և քննութիւն ընելու պէտք կը ցուցնէ ։

Ամբրոսիոս վարդապետ՝ թէ և ոչ Պէկեան էֆէնտիի բառերով , սակայն ճիշդ մի և նոյն տեսութեամբ Պատրիարքէն համար պահանջել կ՚ուզէ և կ՚առաջարկէ որ այս խնդրոյն վերաբերեալ բոլոր գրութիւնք այժմէն տպուին և հրատարակուին որպէս զի Երեսփոխանութիւնք մանրամասն համառօտութիւն ընէ ։ Գառնաւեան էֆէնտի՝ քննութեան մտնելու պէտքը կը յայտնէ և կարծելով որ այսօր խնդրոյն խորը կը մտնենք , անոր յաջող ելք մը տալու համար առաջարկութիւններ ընել կը ձեռնարկէ ։ Վերջապէս Մէրճանօղլու էֆէնտի վտանգ կը տեսնէ այժմէն կասկած յառաջ բերելով խնդրոյն վրայ եղած աշխատութիւնները կասեցունելէն և կ՚առաջարկէ որ անմիջապէս Սրբազանին խնդրած քուէն տանք և այս քննութեան ձեռնարկենք եթէ հարկ տեսնուի ։

Հիմա երկու ճամբայ կայ մեր առջին . կա՛մ Սրբազան Պատրիարքին վստահութիւն յայտարարելով և անոր ցոյց տուած ներքին և արտաքին առարկութիւնները մերժող նախադասութիւն մը քուէարկելով գոցել խնդիրը , վերջը յարմար ժամանակին անոր համարատուութիւն ընելու պայմանաւ և կամ այսօրուընէ որոշել թէ համարատուութիւն ընել պէտք է ։ Ահա ա՛յս երկուքէն մէկը քուէն պիտի որոշէ · և որովհետեւ ժամը 10ին քառորդ կայ , և ճիշդ 10ին ատեանը պիտի գոցենք ըստ սովորութեան , ուստի առանց այլ եւս խօսքն երկարելու և ի նկատի առնլով Սրբազանին այն յայտարարութիւնն որ ըսաւ թէ չեմ կրնար ամէն բան այժմէն հրապարակել և ամէն գրութիւն երեւան հանել , և եթէ պիտի դատապարտէք՝ պատրաստ եմ զոհուելու , այս ամենն ի նկատի առնելով , կըսեմ թէ փակենք վիճաբանութիւնը և երեք եկեղեցական և երեք աշխարհական Երեսփոխաններէ բաղկացեալ յանձնախումբ մ՚ընտրենք , թո՛ղ նա երթայ Սրբազան Հօր հետ բանակցի և խնդրոյն վիճակն տեսնէ՛ և մեզ տեղեկագրէ թէ հնարաւո՞ր է , կարելի է հայկեան խնդրոյն վրայ այժմէն քննութիւն բանալ և հրապարակաւ վիճաբանութիւն ընել թէ ո՛չ · մինչեւ այն ատեն՝ ատենագրութիւնն ալ ի լոյս կելնէ և կպատրաստուին վիճաբանութեան ։

ՊԷԿԵԱՆ Թ· ԷՖ·— Կանոնական դիտողութիւն ունիմ ։ Նախաքննութեան յղելու առաջարկութիւնը կընդունինք · թող քուէի դրուի · բայց դիւանին ուրիշ մէկ առաջարկութիւնն ալ կայ , որ է Նախագահով մը ժողովէն դուրս նետել խնդիրը · եթէ այս ալ քուէի պիտի դրուի · քուէէն առաջ խօսելիք ունիմ այդ մասին ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ·— Ներեցէք որ խնդիրը կրկին ամփոփեմ , Ազգ· Ժողովը Սրբազան Պատրիարք Հօր տուած տեղեկութիւններն ի քննին առնուլ կը փափաքի · բայց այս քննութիւնն ե՞րբ և ի՛նչ հիմանց վրայ ընելիքը տեղեկագրելու համար նախաքննիչ յանձնախումբ մը կը կարգէ ա՞յս է ուզածնիդ թէ ընդհակառակն այժմէն նախադասութիւն կուզէք արձակել ։

ՁԱՅՆԵՐ·— Ա՛յդ այդ՛ նախաքննութիւն կ՚ուզենք ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ·— Ուրեմն այս առաջարկութիւնը քուէի կդնեմ ։

Նախաքննութիւնը անմիջապէս քուէի դրուելով ընդունուեցաւ ժողովէն միաձայնութեամբ ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԲԱՇԱ·— Ուրեմն յանձնախումբ մը պիտի ընենք՝ որ երթայ Սրբազանէն գործը հասկնայ և տեղեկագիր մը բերէ մեզ թէ սոյն խնդրոյն վրայ քննութիւն և հրապարակական վիճաբանութիւնք ընելու ժամանակն եկա՞ծ է թէ չէ , և թէ եկած է , ինչ կերպով զայն ընել պատշաճ կը դատէ · Ուրեմն Սրբազան Հայրը կպահէ ամբողջովին

մեր վստահութեան քուէն մինչեւ որ ուրիշ քուէ մը գայ յաջորդէ ։

Պարապայ մ'ալ կայ . Սրբազան Հօր յառաջ բերած երկու առարկութեանց մին օտարէն և շատ բարձրէն կուգայ ըսաւ Նորին Սրբազնութիւնը . այն է թէ Հայկական խնդիր ըսուածը Սրբազանին հնարած մէկ խնդիրն է և թէ առանց ազգին գիտութեանն ու տեղեկութեանն ինք մէկ քանի անձանց հետ մէկտեղելով և թերեւս ուրիշի գործիք ըլլալով գործած է ։

Միթէ ժողովը կընդունի՞ այս առարկութիւնը ։

ՁԱՅՆԵՐ.— Ո՛չ ո՛չ ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ուրեմն միաձայնութեամբ յոտին կանգնելով յայտնեցէք ձեր մերժումը ։

Անմիջապէս Երեսփոխանք ամբողջովին և եռանդով յոտին կանգնելով միաձայնութեամբ մերժեցին սոյն օտարոտի առարկութիւնը ։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ.— Երկու տարուան մէջ կրած բովանդակ աշխատութեանցս փոխարէն վարձատրութիւն մը կհամարիմ ժողովին այս հանդիսաւոր քուէն, այսինքն՝ օտարէն եկած այն առարկութեան մերժումը ։

Ես այս վայրկեանէն կուզեմ որ ժողովը ոչ միայն իր դժգոհութիւնը՝ եթէ ունի ինձ դէմ, յայտնէ, այլ և հրաժարեցնէ զիս ։ Քաջութիւնն այս է ։

Զայս ըսելով Սրբազան Նախագահը մեկնեցաւ ժողովէն ։

Դիւանին առաջարկութեամբ որոշուեցաւ Նախաքննիչ յանձնախումբն ընտրել 6 հոգի, 3ը եկեղեցական և 3ը աշխարհական ։

Նոյնպէս 5 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութեան վրայ, Յանձնաժողովին ընտրութիւնը գաղտնի քուէով կատարել որոշուեցաւ ։

Եւ որովհետեւ օրը տարաժամած էր, ընտրութիւնն առաջիկայ նստին ձգելու առաջարկութիւն ըլլալով, այս առաջարկութիւնը քուէի դրուելէ ետեւ, 3 քուէի դէմ 18 քուէով ընդունուեցաւ ։

Նոյնպէս՝ կրօն. և քաղ. ժողովոց ընտրութեան քուէհամարն ալ դիւանին և քննչաց յանձնուելով ։

Յաջորդ նիստն 15 օրէն ընել որոշուեցաւ, Օրակարգ ունենալով,

1. Ամբողջացում ընտրութեան կրօնական ժողովոյ։

2. Ընտրութիւն Նախաքննիչ յանձնախմբի Հայկական խնդրոյ ։

3. Տեղեկագիր դատաստանականութեան դիւանի ։

Ատեանը ցրուեցաւ ժամ 10ին ։

Ատենադպիր — Ատենադպիր

Հ. Յ. [illegible] — Մ. [illegible]

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՈԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկալը և Հայ գրավաճառաց քով։